

## ՌՈՒՄԻԱ ՎԵՐՈ ՎԻՐԱՐԿԵՅՑ ՍՈՒՐԻՈՅ ԻՆՔՆԻՇՆԱՆՈՒԹԻՒՆԸ ԽԱՄՏՈՂ ԱՐԵՄՏԵԱՆ ԲԱՆԱՉԵՆԱԽԱՎԻԾԻՆ ԴԵՄ

Երեքշաբթի, 11 Յուլիսին Ռուսիա ՄԱԿ-ի Ապահովական Խորհուրդի Նիստին վեթօ կիրարկեց Սուրիոյ ինքնիշխանութիւնը խախտող արեւմտեան երկիրներու այն բանաձեւ-նախագիծին դէմ, որ կը խախտէ Սուրիոյ գերիշխանութիւնը սահմանէն, առանց Սուրիոյ կառավարութեան տեղեկութեան, մարդասիրական օժանդակութիւն Սուրիա մտցնելու պատրուակով: Միւս կողմէ արեւմտեան երկիրներ մերժեցին Ապահովական Խորհուրդը աջակցութեամբ Սուրիա մարդասիրական աշխատանքներու մէջ ներգրաւելու Ռուսիոյ գործնական, թափանցիկ բանաձեւ-նախագիծը:



ՄԱԿ-ի մէջ Սուրիոյ մնայուն ներկայացուցիչ դեսպան Պասսամ Սապպաղ երկու բանաձեւ-նախագիծերու քուէարկութենէն ետք ըսաւ. «Սուրիան, Ապահովական Խորհուրդի 9 Յունուարին որդեգրած թիւ 2672 Բանաձեւի խորհրդակցութիւններու մեկնարկին առաջին իսկ օրէն կառուցողական մօտեցում ցուցաբերեց, մարդասիրական օժանդակութիւնները՝ յատկապէս երկրաշարժէն ետք, հասցնելու Սուրիոյ բոլոր շրջաններուն՝ առանց աշխատանքի քաղաքականացման, բացառելով խտրականութիւնը»:

## ՆԱԽԱՎԱԶ ԱՍԱՏ ԸՆԴՈՒՆԵՅՑ ՍՈՒՐԻՈՅ ՄԵՅ ԱԼՃԵՐԻՈՅ ԼԻԱԶՕՐ ԴԵՄՊԱՆԻՆ ՀԱԽՏԱՐՄԱԳՐԵՐԸ



Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ ընդունեց Քամալ Պուշամայի հաւատարմագրերը, որպէս Սուրիոյ մէջ Ալճերիոյ Հանրապետութեան լիազօր դեսպան:

Հաւատարմագիրի ընդունման արարողութեան ներկայ էին Սուրիոյ արտաքին գործոց Նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ եւ Սուրիոյ Հանրապետութեան Նախագահական հարցերու Նախարար Մանսուր Ազգամ:

## ԱԶԳ. ԶԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿԱՐՑ ՀՈՒՆՉԹԻ ՀԱՆԴԵՍ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանի, Շաբաթ, 8 Յուլիս 2023-ին երեկոյան ժամը 7:30-ին, Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի շրջափակէն Ներս տեղի ունեցաւ միջ-նակարգի ամավերջի հանդէսը: Հանդիսութեան ներկայ էին Բերիոյ Հայոց



Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Ազգ. Երեսփոխանական Ժողովի եւ Ազգ. Վարչութեան, բարեսիրական, մարզական, միութիւններու ներկայացուցիչներ, Ճեմարանի խնամակալութիւնը, տնօրէնութիւնը եւ ուսուցչական կազմը:

Հանդէսը բաց յայտարարուեցաւ ու ներկաները մէկ վայրկեան յոտընկայս լռութեամբ յարգեցին Նահատակներուն յիշատակը: Երգչախումբը հանդէսին բացումը կատարեց Սուրիոյ եւ Հայաստանի գոյգ քայլերգներով:

Հայերէն բացման խօսքով հանդէս եկաւ Սերլի Մկրտիչեան, որ անդրադարձաւ Ճեմարանէն ներս երեք տարիներու ուսումնական եւ ընկերային կեանքին, իսկ արաբերէն խօսքով Բարտի Ժամկոչեան շնորհակալութիւն յայտնեց կրթական մշակներուն եւ տնօրէնութեան, ինչպէս նաեւ խնամակալութեան եւ սրբազան հօր՝ Ճեմարանին թեւ ու թիկունք կանգնելուն համար:

Հանդէսը սուրբուած էր Արցախին: Ազգ. Զարէն Եփփէ Ճեմարանի 9-րդ կարգի երգչախումբը յաջորդաբար ներկայացուց փունջ մը հայերէն եւ արաբերէն երգեր, գեղարուեստական ղեկավարութեամբ Ռուզան Պարտումեանի:

Շրջանաւարտ Արշալոյս (Արշի) Տիւպերեան  
Շաբ.՝ 19 12 ➤

## ՃԱԿԱՅՆԱԳԻՐ՝ ՓՐՈՖ. ՌԻՉԱՐԾ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ ՄԱՀՈՒՆ ԱՌԻԹՈՎ

Հայ հասարակական-քաղաքական միտքը ծանր կորուստ կրեց. կեանքից հեռացաւ մեծ մտաւորականը, վաստակաշատ գիտնականն ու հայը՝ Ռիչըրտ Յովհաննիսեանը:

Տասնամեակներ շարունակ Ռիչըրտ Յովհաննիսեան կշանակալից, ոգեղէն ներկայութիւն էր հայ երկու իրականութիւնների համար: Միջազգային ամենաբարձր գիտական հարթակներում բազմաբեղուն գիտնականի եւ անբասիր հայի իր տեսակով Ռիչըրտ Յովհաննիսեան արժանապատիւ ներկայութիւն էր, ներշնչանքի աղբիւր մի քանի սերունդի համար:

Հայաստանի Առաջին Հանրապետութեանը նուիրուած նրա կրթողային աշխատութիւնը մեր պատմութեան բարդագոյն ժամանակաշրջանին նուիրուած առաջին համապարփակ, ակադեմական մենագրութիւնն էր, որ պրպտումների եւ բացայայտումների նոր հանգրուան հանդիսացաւ տասնեակ ուսումնասիրողների համար:

Հայաստանի, Անդրկովկասի եւ Միջին Արեւելքի պատմութեան հարցերին, Օսմանեան կայսրութիւնում Հայոց Յեղասպանութեան պատմութեանը նուիրուած նրա աշխատութիւնները արժեքաւոր եւ վաւերական խօսք են հայ եւ միջազգային պատմագրութեան մէջ:

Մեծ է Ռիչըրտ Յովհաննիսեանի վաստակն՝ իբրեւ անխոնջ ուսուցիչ եւ

հայ մտաւորական: Սփիւռքեան տարբեր համայնքներում նրա բազմաթիւ դասախօսութիւնները սերունդների համար եղել են սեփական ինքնութեան բացայայտման եւ պահպանման ակունք:

Մեծ պատմաբանի, վաստակաշատ ուսուցիչի եւ Հայ Մարդու կորուստն համահայկական է, իրապէս՝ անդառնալի:

Ցաւակցում ենք Յովհաննիսեանների մեծ ընտանիքին, նրա արժանաւոր որդուն՝ Ռաֆֆի Յովհաննիսեանին, սիրելի հօր մահուան կապակցութեամբ:

Ռոջ հայ ժողովրդի հետ կիսում ենք Ռիչըրտ Յովհաննիսեանի կորստի ցաւը:

Մեծ հայի յիշատակը վառ է մնալու մեր սերունդների սրտերում, հայ մտքի ժառանգութեան մէջ:



ԴԴ Ազգային Ժողովի «Հայաստան» Դաշինք  
12 Յուլիս 2023

Տեղական Լրագրող

Խմբագրական

ԹՈՒՐՔԻԱՆ ԴԵՊԻ ԵՒՐՈՊԱ՝

ՆԱԹՕ-ի ընդհանուր քարտուղար Եսա Սթոլթենսկիի համաձայն, Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողան 10 Յուլիսին համաձայն գտնուած է Շուէտի՝ ՆԱԹՕ-ի անդամակցութեան դիմումը ներկայացնելու թրքական խորհրդարանին:

Ընդհանուր քարտուղարի եւ Թուրքիոյ նախագահի հանդիպման ասարտին հրապարակուած հաղորդագրութեան մէջ արձանագրուած է, որ Թուրքիա եւ Շուէտ սերտ կերպով պիտի աշխատին «ահաբեկչութեան դէմ պայքարը համակարգելու» եւ երկկողմանի առեւտրական կապերը ամրապնդելու, իսկ «Շուէտ պիտի աջակցի Թուրքիոյ՝ Եւրոպական Միութեան անդամակցութեան հոլովոյթը աշխուժացնելու ջանքերուն, ներառեալ Եւրոպական Միութեան ու Թուրքիոյ միջեւ մաքսային միութիւնը արդիականացնելը եւ մուտքի արտօնագիրներու դրութեան չեղեալ նկատուիլը:

Երեքշաբթի օր Լիթվանիոյ մայրաքաղաք Վիլնիուսի մէջ պաշտօնապէս ընթացք առաւ ՆԱԹՕ-ի վեհաժողովը: Վեհաժողովի ընթացքին մասնակից երկիրները կը նախատեսէին որդէգրել շարք մը որոշումներ, որոնց կարգին Շուէտի ՆԱԹՕ մուտքին, իսկ Ուքրանիոյ՝ դաշինք հաւանական մուտքին շուրջ:

Թուրքիոյ դէպի արեւմուտք ուղղուիլն ու ՆԱԹՕ-ի մէջ իր դերը վերականգնելու փորձը բնականաբար զայրացուցած է Ռուսիան: Վերջինս քաջ գիտէ, որ Թուրքիան դէպի արեւմուտք թեքելով նաեւ պիտի ծառայէ արեւմուտքի նպատակներու իրականացման ու նպաստէ Ռուսիոյ հետ առճակատող ուժերուն:

Թուրքիա դէպի արեւմուտք թեքելով պարզապէս Եւրոմիութիւն իր մուտքը փութացնել չի ձգտիր: Ան կը ջանայ նաեւ քրտական գործօսին դէմ իր գինեալ յարձակումները օրինականացնել «ահաբեկչութեան դէմ պայքար»-ի անուան տակ: Ան եթէ մէկ կողմէ Շուէտ բնակող քիւրտերուն դէմ կը նախատեսէ օգտագործել իր սերտացումը Շուէտի հետ ու անոր հետ համակարգել «ահաբեկչութեան դէմ պայքարը», միւս կողմէ կը ջանայ օրինականացնել թէ՛ Սուրիոյ սահմանին քիւրտերուն դէմ իր հարուածները, թէ՛ կաշկանդել իր երկրի տարածքին քրտական գործօսին խաղաքարտերը:

Միւս կողմէ, սակայն, իրատեսական չեն այն պնդումները, որ Թուրքիան կրնայ փոխել իր քաղաքականութիւնը Ռուսիոյ նկատմամբ: Փաստօրէն, առնուազն սուրիական տագնապին մէջ, Թուրքիա-Ռուսիա գործակցութիւնը, Ասթանայի բանակցութիւններու թէ՛ ահաբեկչութեան դէմ պայքարի ձեւաչափերով, ակներեւ է:

Թուրքիան պարզապէս պիտի ջանայ օգտուիլ թէ՛ Արեւմուտքէն, թէ՛ Ռուսիայէն՝ իր ազգային շահերու իրականացման ծառայեցնելով զանոնք:

Հաւանական է նաեւ որ Երեքշաբթի օր, Վիլնիուսի մէջ Թուրքիոյ նախագահ Ռեճեպ Թայյիպ Էրտողանի եւ Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոնի միջեւ դռնփակ հանդիպումին արձարծուած ըլլայ Արցախի հարցը ու Թուրքիոյ նախագահը փորձ կատարած ըլլայ զսպելու Արցախի իրաւունքներուն մասին բարձրաձայն արտայայտուող Մաքրոնը:

Արցախեան տագնապին մէջ Ռուսիոյ կրաւորական դերը կրնայ վնասել նոյնինքն Ռուսիոյ շահերուն՝ տարածաշրջանին մէջ աւելի ամրացնելով թուրքատրայեճանական դաշինքին ներկայութիւնը:

Հայկական կողմը իր ազգային շահերէն ելլելով պարտի ընդգծել տարածաշրջանին մէջ շահերու բախումները՝ Արցախի թէ՛ Հայաստանի սահմաններուն յառաջիկայ լարուածութիւններու կարելիութիւնները չեզոքացնելու եւ մանաւանդ իր պաշտպանական համակարգը զօրացնելու:

«Գ.»

-Սուրիական կեդրոնական դրամատունը ամ. տոլարին դիմաց սուրիական լիրային փոխարժեքը 9200 ս.ս. սահմանեց, իսկ եւրոյին փոխարժեքը՝ 10.150,36 ս.ս.:



-Սուրիական շուկային մէջ ոսկիին գինը աննախընթաց աճ արձանագրեց: Դամասկոսի Ոսկերիչներու Միութեան հրապարակած ցուցակին համաձայն, 21 կարատ ոսկիին մէկ կրամին գինը հասաւ 533.000 ս.ոսկիի, իսկ 18 կարատ ոսկիի մէկ կրամին գինը հասաւ 456.000 ս.ոսկիի:



- 13 տարուան դադրեցումէն ետք, Զորքշաբթի, 12 Յուլիս 2023-ին, ընթացք առաւ սուրիական-օմանական կառավարական յանձնախումբին 6-րդ շրջանի միացեալ ժողովը: Ժողովը սկսաւ Սուրիոյ տնտեսութեան եւ արտաքին առեւտուրի նախարար Մուհամմետ Սամիր Խալիլի եւ իր օմանցի պաշտօնակից Մուհամմետ Սաաիտ Սաքրիի հանդիպումով: Յանձնախումբերը պիտի ուսումնասիրեն համաձայնագրութիւններ եւ փոխըմբռնումի յուշագրեր, որոնք ստորագրուեցան Հինգշաբթի, 13 Յուլիս 2023-ին:



-Թրքական ուժերուն Հասիչէի Ալլուք ջրամուղ կայանին ըմպելի ջուրի անջատման եւ շուրջ միլիոն քաղաքացի ջրագուրկ պահելուն հետեւանքով, Հասիչէի մէջ աղիքային բորբոքումներով վարակուած պարագաներու թիւը բարձրացած է: Հասիչէի առողջապահութեան տնօրէն տոքթ. Իսա Խալաֆ յայտնեց, որ Հասիչէի բժշկական կեդրոնը ամսական դրութեամբ աղիքային բորբոքումով վարակուած 1350 պարագայ կ'ընդունի: Պարագաներուն մեծամասնութիւնը փոքրերն են, որովհետեւ քաղաքացիները ըմպելի կամ տան օգտագործման ջուրի ապահովման համար անստուգելի աղբիւրներու կը դիմեն, որուն հետեւանքով ալ հիւանդութիւնները կը շատնան:



ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐ ԱՐՏԱԽԱԶԴ ՏՆԿԻԿԵԱՆԻ (ԱՊՈՒ ԱԶԻԶ) ԵՒ ԲԵՆԵԼՈՒԲ ՏՆԿԻԿԵԱՆԻ Հանգուցեալներուն հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 23 Յուլիս 2023-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ մէջ, Սալիպէ - Հալէպ: Յետ հոգեհանգստեան արարողութեան բարերարներուն յիշատակի թարմացման հանդիպում տեղի պիտի ունենայ «Ն. Աղբալեան» սրահը:

ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցին կարիքը ունի քարտուղարի: Հետաքրքրուողները կրնան դիմել Ազգային Առաջնորդարանի դիւանապետին կամ հեռաձայնել հետեւեալ թիւին՝ 2122756: Ս. Քառասնից Մանկանց Մայր Եկեղեցւոյ Թաղականութիւն

## Լուրեր Հայաշխարհին

### ՅՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԼՅՂԵՐՈՂԱՅԻ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՌԱՅՈՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

ՀՀ Դաշնակցության Բիւրոյի հրաւերով, 8 եւ 9 Յուլիս 2023-ին, Աթենքի մէջ գումարուեցաւ Եւրոպայի ՀՀ Դ Կարմիններու Ռայոնական ժողովը, մասնակցութեամբ եւրոպական տարածքին վրայ գտնուող հայազաղութներուն մէջ գործող կուսակցական մարմիններու ներկայացուցիչներուն:

Ընդունուեց լսեց ՀՀ Բիւրոյի ու շրջաններու տեղեկագրերը եւ հանգամանօրէն քննեց հայրենի, համահայկական եւ տարածաշրջանային հարցերուն մասին զեկուցումներն ու դիմագրուելի մարտահրաւերները:

Ընկերակցութեամբ կազմակերպական կեանքը, լուսարձակի տակ առնելով Եւրոպայի համայնքային կեանքի իրավիճակն ու հեռանկարները, գաղութներու հզօրացման անհրաժեշտութիւնը, մերժելով նաեւ ամեն տեսակի պատակտիչ քայլերը՝ ջլատելու սփիւռքի ուժականութիւնը:

Ընդունուեց քննարկեց Հայաստանի իշխանութիւններու վարած քաղաքականութիւնը Արցախի հիմնահարցին գծով ու մերժելի նկատեց որեւէ փորձ Արցախի ամբողջականութեան ու ինքնորոշման իրաւունքի ոտնահարման ուղղութեամբ:

Ընդունուեց քննարկման լայն առարկայ դարձուց Արցախի հիմնահարցը եւ ներկայ իրավիճակը, մասնաւորապէս քննելով եւրոպական երկիրներու եւ համաեւրոպական մակարդակի վրայ Հայաստանի ու Արցախի հարցերուն կապակցութեամբ եւրոպահայութեան համախմբման ծրագիրներու ծաւալումը յառաջիկայ ամիսներուն:

Ընկերակցութեամբ կազմակերպական կեանքը, լուսարձակի տակ առնելով Եւրոպայի համայնքային կեանքի իրավիճակն ու հեռանկարները, գաղութներու հզօրացման անհրաժեշտութիւնը, մերժելով նաեւ ամեն տեսակի պատակտիչ քայլերը՝ ջլատելու սփիւռքի ուժականութիւնը:

Ընդունուեց քննարկեց Հայաստանի իշխանութիւններու վարած քաղաքականութիւնը Արցախի հիմնահարցին գծով ու մերժելի նկատեց որեւէ փորձ Արցախի ամբողջականութեան ու ինքնորոշման իրաւունքի ոտնահարման ուղղութեամբ:

Ընդունուեց քննարկման լայն առարկայ դարձուց Արցախի հիմնահարցը եւ ներկայ իրավիճակը, մասնաւորապէս քննելով եւրոպական երկիրներու եւ համաեւրոպական մակարդակի վրայ Հայաստանի ու Արցախի հարցերուն կապակցութեամբ եւրոպահայութեան համախմբման ծրագիրներու ծաւալումը յառաջիկայ ամիսներուն:

Ընկերակցութեամբ կազմակերպական կեանքը, լուսարձակի տակ առնելով Եւրոպայի համայնքային կեանքի իրավիճակն ու հեռանկարները, գաղութներու հզօրացման անհրաժեշտութիւնը, մերժելով նաեւ ամեն տեսակի պատակտիչ քայլերը՝ ջլատելու սփիւռքի ուժականութիւնը:



ՀՀ Դ Եւրոպայի Կարմիններու Ռայոնական ժողով Աթենք, 8 եւ 9 Յուլիս 2023

### ՏԵՐԻ ՌԻՆԵՅԱՒ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՌԻՍԱՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՄԱՐԻՆ ԲՆՅՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

7 Յուլիսին, Երեւանի «Եւրոպա» հիւրանոցի դահլիճին մէջ տեղի ունեցաւ Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան ուսանողական համահաւաքին՝ ֆորումին, բացման արարողութիւնը:

Բացման ողջոյնի խօսքով հանդէս եկան Համազգայինի Կեդրոնական Վարչութեան անդամներ՝ Արտաշէս Շահբազեան, Արեւիկ Գաբրիելեան, Արա Գեորգեան, Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային հիմնադրամի Նախագահ Սպարտակ Դարաբաղեան, Համազգայինի Երեւանի գրասենտակի տնօրէն Ռուզան Առաքելեան, Ռուսիոյ Համազգայինի մասնաճիւղի ատենապետ Արթուր Փայտեան եւ Նոյն մասնաճիւղի անդամ Բալիկ Գալեմբերեան:



Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան ուսանողական ֆորումը Համազգայինի աւանդական ծրագրերէն է:

Ան աշխարհի տարբեր երկիրներու ուսանող հայ համալսարանականները համախմբելու, գիրքեր ազգային արմատներուն ու մշակութային ժառանգութեան հաղորդակից դարձնելու, ազգային յանձնառութիւններ վստահելու ձեռնարկ է:

Այս տարի Համազգայինի ուսանողական ֆորումը տեղի կ'ունենայ 7-19 Յուլիսին, Երեւան: Ֆորումին իրենց մասնակցութիւնը կը բերեն Սփիւռքի տարբեր գաղթօջախները (Սուրիա, Լիբանան, ԱՄՆ, Ֆրանսա...) ներկայացնող 17 հայ երիտասարդներ, ինչպէս նաեւ մասնակիցներ Հայաստանէն եւ Արցախէն:

Ծրագրի 11 օրերուն ընթացքին համալսարանական երիտասարդները առիթ կ'ունենան հանդիպելու հայրենի մտաւորականներու, քաղաքական-հասարակական գործիչներու հետ, կը լսեն պատմամշակութային նիւթերով դասախօսութիւններ, իրենց տարեկիցներուն հետ կը քննարկեն ժամանակակից հայ երիտասարդները յուզող տարաբնոյթ հարցեր:

Համահաւաքի օրերուն սփիւռքահայ ուսանողները կը հիւրընկալուին Երեւանի պետական համալսարան, Մատենադարան, Հայաստանի Ամերիկեան Համալսարան, Թուֆո, տարբեր թանգարաններ, կը լսեն դասախօսութիւններ «Հայկական ճարտարապետութիւն», «Ազգային նուագարաններ» եւ այլ նիւթերով:

Ֆորումի մասնակիցները կ'այցելեն նաեւ Կիւմրի՝ ճանչնալու Հայաստանի մշակութային քաղաքի տեսարժան ու պատմամշակութային վայրերը:

Համազգայինի Երեւանի Գրասենտակ

### ՈՉ ԵՄ Է ԱՆԽԱՐՀԱՆՈՉԱԿ ՀԱՅ ՓԻՏՆԱԿԱՆ ՌԻՉԵՐՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

10 Յուլիսին, ԱՄՆ-ի մէջ 90 տարեկան հասակին կեանքէն հեռացաւ աշխարհահռչակ գիտնական, Հայաստանի ազգային ակադեմիայի ակադեմիկոս, Զալիֆօրնիոյ պետական համալսարանի Արդի հայոց պատմութեան բաժնի հիմնադիր ու առաջին վարիչ, «Հայաստանի Հանրապետութիւն» կողողային քառահատոր աշխատութեան եւ Հայոց Տեղապահութեան ու պատմական մեր հայրենիքին առնչուող բազմաթիւ գիրքերու հեղինակ Ռիչըրտ Յովհաննեսեանը:



### ԱՐԴԱՐԱՂԱՏՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՂԱՏԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԱԾ Է ԱՏՐՂԵՅՃԱՆԻՆ ԲԵՐՉՈՐԻ ՄԻՋԱՆՅՔՈՎ ԱՆԽԱՓԱՆ ՏԵՂԱՆՐԺԸ ԵՐԱՆԽԱԿՈՐԵԼ ՊԱՐՏԱԿՈՐԵՅՆՈՂ ՈՐՈՇՈՒՄԸ

6 Յուլիսին Արդարադատութեան միջազգային դատարանը տուած է որոշում Տեղային խտրականութեան բոլոր ձեւերու վերացման մասին հռչակագրի ծիրին մէջ քննուող Հայաստանն ընդդէմ Ատրպէյճանի գործով իր՝ 22 Փետրուար 2023-ի միջանկեալ խնդրանքին վերաբերեալ, որ պայմանաւորուած էր Ատրպէյճանի կողմէ Բերձորի միջանցքին մէջ անցակետ տեղադրելու փաստով:



Դատարանը վերահաստատած է իր 22 Փետրուար 2023-ի որոշումը, որով Ատրպէյճանին պարտաւորեցուցած էր՝ ձեռնարկելու բոլոր միջոցները երաշխաւորելու Բերձորի միջանցքով քաղաքացիներու, փոխադրամիջոցներու եւ բեռներու՝ երկու ուղղութիւններով անխափան տեղաշարժը, գտած է, որ այս պահուս չկայ իր 22 Փետրուար 2023 թուականի որոշումը լրացնելու անհրաժեշտութիւնը:

Փոխադրամիջոցներու եւ բեռներու՝ երկու ուղղութիւններով անխափան տեղաշարժը, գտած է, որ այս պահուս չկայ իր 22 Փետրուար 2023 թուականի որոշումը լրացնելու անհրաժեշտութիւնը:

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ Հանգուցեալ ԱՆՆԱ ՄԱՆՍՈՒԲԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 23 Յուլիս 2023-ին, յաւարտ Ս. եւ Ամմահ Պատարագի, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, Կիլլաներ - Հալէպ: Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին Կրթասիրաց Մշակութային Միութեան շրջափակը:





## Թուրքիոյ նուրջ

### ՍԱՖՐԱՍՏԵԱՆ. «ԹՈՒՐԷՒՈՅ՝ ԳԵՊԻ ԱՐԵՄՈՒՏԵ ԶԳՏՈՒՄԸ ԿԸ ՅԱՆՉԵՅՆԷ ՌՈՒՍԻՈՅ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿՈՇՏԱՅՈՒՄԻՆ»

Թրքագետ Ռուբեն Սաֆրաստեան NEWS.am-ին հետ զրոյցի ընթացքին յայտնեց, որ Թուրքիա կը փորձէ քաղաքական իր ուղղութիւնը թեքել դէպի Արեւմուտք՝ միաժամանակ պահել փորձելով Ռուսիոյ հետ յարաբերութիւնները:

«Էրտողան կը սկսի իր առեւտուրի հիմնական փուլերէն մէկը՝ առաջ-նահերթաբար ԱՄՆ-ի հետ: Պայտընի հետ հեռաձայնային զրոյցին ընթացքին, խօսք դարձած է նաեւ Եւրոմիութեան անդամակցելու մասին: Տեղի կ'ունենայ Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան հերթական ուղղորդումը դէպի Արեւմուտք: Էրտողանի կառավարման յատկապէս վերջին շրջանին ատիկա յաճախակիորէն կը նկատուէր: Պատճառը ակնյայտ է՝ բան մը բրցնել, օգտուիլ, սակայն Թուրքիան չի հրաժարիր նաեւ Ռուսիոյ հետ իր ունեցած յարաբերութիւններու ներկայ մակարդակէն, որովհետեւ ան շատ օգտակար է իրեն: Էրտողան ասիկա կը կատարէ բաւական վարպետօրէն», յայտնեց Սաֆրաստեան:



Թրքագետին խօսքով՝ նման քաղաքականութեան պատճառներէն մէկը Թուրքիոյ նորանշանակ արտաքին գործոց նախարար Յաքան Ֆիտանի դերն է, որովհետեւ ան իր բարձրագոյն կրթութիւնը ստացած է Եւրոպա եւ ներգրուած է ԱԹՕ-ի աշխատանքներուն մէջ:

«Չեմ կարծեր, որ միայն այդ պատճառով ընտրութիւնը իր վրայ կեդրոնացած էր: Էրտողանի համար ամենակարեւորը այն է, որ ինք կը վստահի Ֆիտանին: Ան ըսած է, որ Ֆիտան կը պահպանէ իր անձնական գաղտնիքները եւ Թուրքիոյ գաղտնիքները: Էրտողան կը փորձարկէ Ֆիտանը եւ չեմ բացառեր, որ ա կը պատրաստէ Ֆիտանը որպէս իր յետնորդը», ընդգծեց Սաֆրաստեան:

Սաֆրաստեան նկատել տուաւ, որ Ռուսիա տարբեր մակարդակներու վրայ արդէն դժգոհութիւններ կը յայտնէ Թուրքիոյ քաղաքականութեան նկատմամբ: Այդ դժգոհութիւնները աւելի կը սրին, երբ Թուրքիա աջակցի Ուքրանիոյ:

«Թուրքիոյ եւ Ուքրանիոյ միջեւ ստորագրուած է ռազմատեքնիկական համաձայնագրութիւն, որով Թուրքիան կ'օգտագործէ Ուքրանիոյ շարժիչներու կարելիութիւնները, որովհետեւ ինք կարողութիւն չունի նման շարժիչներ արտադրելու: Թուրքիան ալ ծանր գէնք կու տայ Ուքրանիոյ: Եւ այստեղ պատահական չէ, որ ռուս պատգամաւորներէն մէկը ըսած է, թէ հակամարտութեան մէջ Թուրքիան չեզոք դիրքէ հակառակ դիրք կ'ուղղուի: Ռուսական քաղաքականութեան մէջ ընդունուած է, որ սկիզբը ամէն բան ըսուի պատգամաւորներու բերով: Երկու կողմերն ալ կը փորձեն պահպանել յարաբերութիւնները, սակայն Թուրքիոյ նման մարտավարութիւնը կրնայ յանգեցնել Ռուսիոյ քաղաքականութեան կոշտացման», ըսաւ Սաֆրաստեան:

### ՆԱՅԱՍՏԱՆԻ ՆԱՆՐԱԴԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ՇԱՆԵՐ

Արամ Աւագեան

Գաղտնիք մը չէ, որ այսօր Հայաստանի Հանրապետութիւնը ինչպէս նաեւ ողջ հայութիւնը կ'ապրին ճգնաժամ, գոր կ'ընդգրկէ՝ քաղաքական, տնտեսական, ընկերային, մշակութային, գաղափարական եւ հոգեբանական ոլորտները:

Հայաստանի Հանրապետութիւնը հայ մարդուն համար սոսկ մարդկային հաւաքականութեամբ հիմնուած պետականութիւն մը չէ, այլ՝

- 1.- Հայ մարդու սեփական շնորհքներու ազատ զարգացման գրաւականն է,
- 2.- Ազգային ծարձակումի առաջին հիմնաքարն է, որ ունի պետական կարելիութիւններ,
- 3.- Հայոց Տեղասպանութեան պահանջատերն ու պաշտպանն է, պարտականութեան եւ իրաւունքի պետական գոյգ հանգամանքներով:

Հայկական պետականութեան կերտումն ու անկախութիւնը վահան հանդիսացան պաշտպանելու հայ ազգը տարբեր կայսրութիւններու բռնա-



րարքներ: Օսմանեան Թուրքիոյ կիրարած՝ ընկերային, քաղաքական եւ տնտեսական անարդարութիւնները կործանման պիտի ուղղէին արեւմտահայութիւնը: Հայկական պետականութեան հաստատումով, հայ ազգը կրկին ծաղկեցաւ, պաշտպանեց եւ պէտք է շարունակէ պաշտպանել իր իրաւունքները պետական դրոյթով եւ հանրապետութեան ընծայած կարելիութիւններով:

Միայն է իրարմէ անջատել ազգային եւ պետական շահերը, քանի որ առաջինը երկրորդին՝ ա. - հիմն է, բ. - տուն տուող ազդակն է, գ. - պաշտպան վահանն է, դ. - գաղափարական եւ առարկայական դիմադրողականութիւնը զօրացնող սուրն է:

Ազգայինն ու պետականը ունին տրամաբանական եւ գոյակցական յաջորդականութիւն: Այս զգայուն հաւասարակշռութիւնը խախտել փորձողը անպայման ազնիւ նպատակներ չի հետապնդեր: Ազգայինն ու պետականը միասնաբար կը կազմեն քաղաքական հովանի, որուն շնորհիւ առիթ կ'ընծայուի պետականօրէն հետապնդելու ազգային շահեր, նաեւ կ'արգիւրի որեւէ հակասութիւն երկուքին միջեւ կամ գիրար չեզոքացնելու փորձ:

Ազգային շահերէն փխող հայ պետականութիւնը ե՛լ ծնունդ պէտք է տայ, ե՛ւ հովանաւորէ, հսկէ, իր կատարելիութեան հասցնէ Հայաստանի Հանրապետութեան գիտական, տընտեսական, մշակութային եւ ընկերային զարգացման իրաւունքները, նպատակ ունենալով ամրագրել պետականութեան ու անկախութեան հիմքերը:

ՀՀ պետականութիւնը արեւելումի այլընտրանքի դէմ յանդիման է:

Պարտաւոր է ընտրել նպաստաւոր տարբերակ՝ ա. - ազգային շահերը նկատի առնելով, բ. - ցեղային ծայրահեծանքներէն խուսափելով, գ. - հայրենիքի աշխարհագրական թելադրանքներուն գիտակցելով: Հետեւաբար ՀՀ պետականութիւնը՝ քաղաքական պարտաւորութեամբ պէտք է ամբաստանէ Հայոց Տեղասպանութեան ոճրագործ խմբակին անդամները, որոնք ՀՀ-ը գրկած են:

Ա. - Արտաքին քաղաքական դաշտին մէջ գերակայութեան կարելիութիւններէն,

Բ. - Տնտեսական բարգաւաճումէն, Գ. - Հայրենի արեւմտեան հողերու տիրութենէն:

Հանգամանք մը, որ պէտք է ստանձնեն ՀՀ պետականութեան հիմնարկները, որպէսզի վերակառուցեն եւ միաձուլեն հայրենի քաղաքական միասնական կամքն ու տնտեսական համահաւասար զարգացումը:

ՀՀ պետական գոյութիւնն ու անկախութիւնը՝ հանրապետական դրոյթով, կը կազմեն այն ապացոյցը, որուն համաձայն հայ անհատը իր հոգեմտաւոր ակնկալիքները պիտի ստանայ անկախ պետականութեան յարատեւութեան համահասկանալիութենէն:

Անկախութիւնը յոյսի խարիսխ է ՀՀ քաղաքացիներուն համար: Ան կ'երաշխաւորէ իրաւունքներու պաշտպանութիւնը, նաեւ մեկնակետ կը հանդիսանայ Հայոց Տեղասպանութեան արդար պահանջատիրութեան:

ՀՀ քաղաքական ներկայութիւնը միջազգային թէ շրջանային ատենաներուն մէջ յոյս կը ներշնչէ իւրաքանչիւր հայ մարդու, ըլլալ հայրենաբնակ թէ ոչ: Ազգը եւ պետականութիւնը միասին կը կազմեն պահանջատիրական մէկ ամբողջութիւն եւ կը կերտեն միաձոյլ քաղաքական կամք ու ցեղային պայքարի ոճն ուղի:

ՀՀ պետականութիւնը իր առողջ տարբերակին մէջ կը սեպուի:

1.- Պաշտօնական եւ տրամաբանական շարունակութիւնը հայկական թագաւորական չորս հարստութիւններուն, որոնք իշխած են հայկական բարձրաւանդակի տարածքին՝ պետական կառոյցներով ծառայած են հայ ազգին:

2.- ՀՀ պետականութիւնը իրաւացի թարգմանն է հայ ազգի քաղաքական ապագայի տեսիլքներուն, կերտելու ազգային հանրապետութիւն, հայկական պատմական հողերու վրայ:

3.- ՀՀ պետականութիւնը ազգի գոյատեւման հիմնասիւններէն գլխատուն է, որ որպէս համահայկական ազգային բեւեռ կը մագնիսացնէ ողջ հայութիւնը անխտիր:

ՀՀ-ը ինքզինք արտայայտող պետական յատակ եւ ինքնուրոյն խորհրդանշաններ ունի, որոնք կը փխին հայ հոգիէն եւ կը պատկանին հայրենասէրներէն:

Այդ խորհրդանշաններէն են հանրապետութեան զինանշանը, ազգային դրօշը, պետական քայլերգը, ազգային բանակն ու անկախութեան հռչակագիրը եւ ՀՀ խորհրդարանը:

ՀՀ հանրապետութեան զինանշանը կը խորհրդանշէ. ա. - հայ ազգին գերակայութիւնը հայկական հողին վրայ եւ օրային տարածքին մէջ, բ. - հայրենիքի գոյատեւման եւ անոր մէջ ապրելու բնական ցանկութիւնը, գ. - բռնազարուեալ հայրենի հողերու պահանջատիրութիւնը, դ. - Արարատի վե-

**ՀՈԳԵՀԱՆԳԻՍ**

Մուսալի ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ գերշ. Տ. Սակար Սրբ. Եպս. Ազգարեանին, Բերիոյ Հայոց Թեմի Ազգային Իշխանութեան եւ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարազատին՝

**ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՀԱՅԿՈՒՀԻ ՄՈՒՍԱԼԼԻԻ (Ծնեալ՝ ԺԱՄԿՈՉԵԱՆ)**

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 23 Յուլիս 2023-ին, յարաւ Ս. եւ Աննահ Պատարագի, Ս. Բառասնից Մանկանց Մայր եկեղեցոյ մէջ, Սայիպէ - Հալեպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Ն. Աղբալեան» սրահը:

**www.kantsasar.com**

www.kantsasar.com

www.kantsasar.com



## ՀԱՐՑԱԶՐՈՅ

### ԳՈՌ ՄԱԹԵՒՈՍԵԱՆ. «ՄԻՒՆԵՑԻՆԵՐԻ ԲԱՑԱՐՁԱԿ ՄԵԾԱՄԱՄՆՈՒԹԻՒՆԸ ԻՐԵՆ ՉԻ ՊԱՏԿԵՐԱՑՆՈՒՄ ՈՐԵՒԷ ԱՅԼ ՏԵՂՈՒՄ ԱՊՐԵԼ»

**«Գանձասար» հարցազրույց ունեցավ ԳՅԴ ՅԵՄ-ի «Դեպի Սիւնիք» ծրագրի պատասխանատուներին Գոռ Մաթեուսեանի հետ՝ ընթերցողները ծանոթացնելու ծրագրի նպատակին ու այս առումով առնուած քայլերուն:**

**Ստորև կը ներկայացնենք հարցազրույցը.**

**«Գանձասար» - Ինչպիսի՞ ռազմավարական նշանակություն ունի Սիւնիքը Հայաստանին, Արցախին եւ տարածաշրջանին համար:**

**Գոռ Մաթեուսեան.** Սիւնիքը նա իր աշխարհագրական դիրքով, իր հարստությունների աղբիւրներով, իր հնարաւորություններով եւ ամենակարեւորը աշխարհագրական դիրքով ամբողջ աշխարհի ուշադրութեան կեդրոնում է այսօր: Բոլորս այդ գիտենք, աշխարհը գիտէ դա, որովհետեւ մեծ երկրներ ու մեծ շահեր ակնկալող երկրներ իրենց ամբողջ ուշադրութիւնը սեւեռած են Սիւնիքի վրայ: Բնականաբար արցախեան 44-օրեայ պատերազմէն յետոյ աւելի խոցելի դարձաւ Սիւնիքը: Սիւնիքը իր աշխարհագրական դիրքով սեպն է, մեխն է հանդիսանում ամբողջ մեծ թուրանական ծրագիրին, որը բոլորս գիտենք հարիւրամեակներ շարունակ Թուրքիայի եւ թուրքալեզու ժողովուրդների երազանքն է եղել, յատկապէս Թուրքիայի, քանի որ ծրագրի հեղինակն ու կազմակերպիչը ինքն է եղել: 44-օրեայ պատերազմից առաջ Թուրքիան, էսպէս ասած, եւ քաղաքականօրէն, եւ ռազմական միջոցներով գրաւեց ու իրենով արեց Ատրպէյճանը:

44-օրեայ պատերազմը ըստ իս՝ ոչ միայն արցախեան պատերազմն էր, այլ հենց ուղիղ փան-թուրքիզմի ծրագրի իրականացման համար էր: Փան-թուրքիզմի ծրագրի իրականացումը

տու չէ: Իսկ Թուրքիայի Սիւնիքի մէջ հզօրացումը Հայաստանի ամբողջական կորուստն է: Եթէ ոչ Հայաստանի ֆիզիքական կորուստը, այլ եւ տընտեսական եւ քաղաքական եւ բարոյական առումով Հայաստանը դառնալու է թուրքական ազդեցութեան մեծ գօտի, որովհետեւ մեր աղբիւրները, միջոցները քիչ են, փոքր են, միւս կողմ Թուրքիան հսկայական տնտեսութիւն ունի եւ վերցնելու է թէ՛ հայկական ամբողջ տնտեսութիւնը, թէ՛ այն ամէն ինչ որ պատկերացնում ենք: Երեւի տարածաշրջանի առումով Սիւնիքի դերը էսքանով կարող եմ նկարագրել, իսկ միւս մասով պէտք է ասեմ որ Արցախի վերագատագրումը, որ միանշանակ ապագայում մենք պէտք է իրականացնենք, սկսելու է Սիւնիքից, այսինքն Սիւնիքի որեւէ մասի կորուստը ոչ միայն Հայաստանի, այլեւ հայ ժողովուրդի իտեալների, պատկերացումների, Հայ Դատի, մեր պահանջատիրութեան, Սփիւռքի հայ իրականութեան կորուստն է լինելու:

**«Գ.» - 44-օրեայ պատերազմն ու անոր հետեանը ներքին եւ Սիւնիքի կացութիւնը ի՞նչ վիճակ կը պարզէ այսօր: Ի՞նչ մարտահրաւերներ կը դիմագրաւէ ժողովուրդը:**

**Գ.Մ.** 44-օրեայ պատերազմից յետոյ, ինչպէս նշեցի, Սիւնիքը դարձաւ էլ աւելի խոցելի եւ այդպիսով նաեւ Հայաստանը մնաց խոցելի: Մարտահրաւերները կարող էք Սիւնիք այցելելուց, անգէն աչքով եւ շատ մօտիկից տեսնել... ատրպէյճանական թշնամական դրօշներ, օրինակ: Դա իրենից ներկայացնում ա, որ սիւնեցին եւ առհասարակ հայը ով մտնում է Սիւնիք, բարոյական առումով շատ է ազդու, վատ իմաստով, որովհետեւ իր երկրի սահմաններում, իր տարածքում, իր բնակարանի գլխին թուրքական, ատրպէյճանական ներկայութիւն կայ: Իրավիճակը կարելի է ասել, որ եթէ ոչ բոլոր գիւղերում՝ հիմնական ամբողջ Սիւնիքում գտնուող սահմանամերձ գիւղերի ամենահեռու հեռավորութիւնը թշնամու յենակետի երեւի 200-ից 300-մէթր է, իսկ ամենամօտը՝ կարող եմ ասել 30-35 մէթր: Այսինքն Սիւնիքի ամբողջ ռազմավարական բարձունքները, բացառութեամբ մի քանի բարձունքի, ուղիղ իմաստով գտնուում են թըշնամու տիրապետութեան տակ, ինչ որ խոցելի է դարձնում Սիւնիքը ու ամէն պարագայում եթէ որեւէ ռազմական բախում կամ պատերազմի վտանգ լինի եւ սկսուի պատերազմ, բնականաբար էլ աւելի դժուար է լինելու դիմակայել, քան երբեւէ եղել է: Բայց իմ Սիւնիքում գտնուելու երկու տարիների ընթացքում ես սիւնեցու մէջ նկատել եմ դիմադրողական ոգի: Սիւնեցիների բացարձակ մեծամասնութիւնը իրեն չի պատկերացնում որեւէ այլ տեղում ապրել: Մարդիկ պատրաստ են դիմադրել, դիմակայել կեանքի գնով, արեան գնով: Նաեւ ասեմ, որ սիւնեցիները իրենց կեանքով ապացուցել են, - Դաւիթ Բէկի եւ Նժդեհի ժամանակահատուածում, - որ իրենք արմատացած են հողի մէջ ու չեն պատրաստուում որեւէ տեղ գնալ: Համոզուած եմ որ Նոյն բանը լինելու է յառաջիկայ մեր ազգային պետական մարտահրաւերի դէպքում Սիւնիքում տեղի ունեցող ռազմական կամ պատերազմական բախումների ժամանակ: Աստուած մի արասցէ, բայց յուսով եմ որ այդպէս է լինելու:

Տնտեսական մասով չեմ ասի, որ շատ ծանր է, փորձում են դիմակայել եւ հնարաւորինս լինում է: Կան գիւղեր, որոնք ոչ այնքան լաւ վիճակում են, բայց հիմնականում, տնտեսական առումով, քանի որ սահմանամերձ մարզ է ինքը, Իրանի հետ ուղիղ կապի մէջ է եւ հանքարդիւնաբերութեան տարածներից է Հայաստանում, բաւականին տնտեսապէս կայուն վիճակ է: Բարոյական առումով նշեցի, որ պատրաստ են, հոգեբանական առումով՝ Նոյնպէս:

կում են, բայց հիմնականում, տնտեսական առումով, քանի որ սահմանամերձ մարզ է ինքը, Իրանի հետ ուղիղ կապի մէջ է եւ հանքարդիւնաբերութեան տարածներից է Հայաստանում, բաւականին տնտեսապէս կայուն վիճակ է: Բարոյական առումով նշեցի, որ պատրաստ են, հոգեբանական առումով՝ Նոյնպէս:

**«Գ.» - Ինչպէ՞ս ստեղծուեցաւ «Դեպի Սիւնիք» ծրագիրը, ի՞նչ են ծրագրի նպատակները եւ ի՞նչ յաջողութիւններ արձանագրած էք մինչ օրս:**

**Գ.Մ.** Էլի պէտք է գամ 44-օրեայ պատերազմին: 44-օրեայ պատերազմից յետոյ, Դաշնակցութեան Բիւրոյի Երիտասարդական գրասենեակը եւ Հայաստանի Երիտասարդական Միութիւնը՝ ՅԵՄ-ը, համատեղ որոշում կայացրեցին, որ Սիւնիքում անհրաժեշտ է Դաշնակցութեան երիտասարդական դիմադրողական ոգին արթուն պահել եւ դա կազմակերպել է պէտք, իսկ կազմակերպելու համար պէտք է փորձառու ընկեր, որը որոշակի կուսակցական, միութենական ճանապարհ է անցել ու որոշուեց որ «Դեպի Սիւնիք» ծրագրի գործիչը պէտք է լինեմ ես: Ծրագիրը սկսուեց 2021 թուականի Յունիսի 16-ից: Ես եւ ընկ. Տիգրան Խոտանեանը՝ Ամերիկայից, միասին այցելեցինք Սիւնիք, այցելեցինք Կապան եւ որոշեցինք, որ պէտք է բնակութիւն հաստատել այնտեղ, այնքան ժամանակ որ մեր կարիքը կայ: Ընկ. Տիգրանը գործուղուած էր երկու ամսով, իր երկու ամիսների ընթացքում նա իրականացրեց հրակայական գործունեութիւն եւ պատանեկան, եւ երիտասարդական շրջանակներում: Իր միութենական փորձը փոխանակեց տեղի ընկերների եւ օժանդակ խմբի հետ: Եւ մենք Դաշնակցութեան ՅԵՄ-ի «Դեպի Սիւնիք» ծրագրի առաջին խումբը ստեղծեցինք, որի ստեղծումը տեւեց մօտ երեք ամիս: Խումբը օժանդակ շրջան անցկացրեց եւ խոստման արարողութիւն իրականացրեց Եռաբլուրում՝ ընկ. Քրիստափոր Արթինի շիրմին, ով խորհրդանշական էր, ով Կապանում հիմնական բնակութիւն էր հաստատել Զանաթայից, եւ նա լուսահոգի դարձաւ 44-օրեայ պատերազմին Լուլասագի բարձունքում: Հիմա հենց էլ առաջին խումբի անունը ընկերոջ պատուին կոչուում է Քրիստափոր Արթին:

Սկզբնական շրջանում սկսեցինք կազմակերպել արշաւներ, որպէսզի 2022-ից երիտասարդական դաշտը ու հասկանանք, թէ ո՞ր թիրախի վրայ է պէտք աշխատել: Հասկացանք որ հնարաւոր է երիտասարդական խումբը ստեղծելը Կապանում ու ստեղծեցինք առաջին խումբը: Հիմա արդէն երկրորդ օժանդակ խմբի վրայ ենք աշխատում: Մինչ այդ իրականացրել ենք «Վերելք Սիւնիք» ծրագիրը, որի ժամանակ չորս շահառուներ են եղել ու դրամական բաւականին խոշոր պարգէներ են տրուել յաղթողներին: Հիմա «Վերելք Սիւնիք» ծրագրով Կապանի մէջ գործում է երեք տնտեսական ծրագիր, իսկ չորրորդը ընթացքի մէջ է՝ վերանորոգման աշխատանքներ եւ ծրագրային փուլի մէջ է: Ես պահին գործում եմ մէկ հանգստեան գօտի, մէկ դեղատուն Զաջարանում եւ մէկ սրճարան: «Վերելք Սիւնիք»-ը երիտասարդական ծրագիր է, որպէսզի Սիւնիքում ապրող երիտասարդը իր երազանքները փորձի նաեւ մեր միջոցով իրականացնել Սիւնիքում, հիմնականօրէն բնակուի Սիւնիքում, չարտագաղթի ու չմտածի արտագաղթելու մասին: Ծարուսակելով ասեմ որ բաւականին մեծ ռազմավարական միջոցառումներ ենք ունեցել՝ զէնքի տիրապետման դասընթացներ, բանակումներ ենք իրականացրել Սիւնիքի մարզի տարբեր վայրերում: Փորձել ենք երիտասարդների մէջ բարձրացնել ազգային-գաղափարական ոգին, Դաշնակցութեան միջոցով բնականաբար: Զենքի տիրապետման մեծ դասընթացներ ենք իրականացրել նաեւ: Իրական զէնքից օգտուելու հնարաւորութիւն ենք տուել սիւնեցի երիտասարդին, որպէսզի հե-




միայն ու միայն անցնում է Սիւնիքի մարզով, Մեղրիով է անցնում, Ջերմուկով է անցնում: Իրենց պատկերացումներով ռազմավարական այս երկու «միջանցքներով» է անցնում Սիւնիքի միջանցք կոչուածը, որը հայ իրականութեան մէջ, հայ ժողովրդի համար անընդունելի է:

Տարածաշրջանի համար բնականաբար Իրանը իր մեծ շահերն ունի Սիւնիքի մարզում, քանի որ հարաւէն (Իրանի հիւսիսէն) դէպի հիւսիս (Հայաստանի հիւսիս) ընթացող ճանապարհը անցնում է Սիւնիքի միջով: Իրանը շատ մեծ շահեր ունի այնտեղ, հետեւաբար պիտի աշխատի որ «միջանցք» կոչուածը գոյութիւն չունենայ: Եւ մենք գործում քայլեր ենք տեսնում Իրանից եւ քաղաքական եւ ռազմական առումով փորձեր են կատարում, որպէսզի գսպեն Թուրքիային եւ Ատրպէյճանին: Նաեւ որոշակիօրէն Ռուսաստանից ենք տեսնում քայլեր, որովհետեւ շատ շատ հզօր Թուրքիան Ռուսաստանին Նոյնպէս ձեռնտու չէ, ըստ իմ քաղաքական պատկերացումների՝ ենթացիկաբար Արեւմուտքին ալ ձեռն-



## ԱՐԵԳԱԿՆ ԱՐԴԱՐ...



Վաղեղ Արդ. Վառեհճեան

«Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ, երկնակամարը Անոր արարչութիւնը կը վկայէ» (Սաղմոս 19. 1):

Պիքֆայայի լեռնային բարձր դիրքը կը նպաստէ Ս. Աստուածածին վանքին մէջ ապրողներու Աստուծոյ մօտենալու գործընթացին: Մեր նախնիները կը հաւատային, թէ լեռները այն վայրերն են, ուր մարդ աւելի դիւրութեամբ, հանգստութեամբ եւ արագ կերպով կրնայ հանդիպիլ Աստուծոյ հետ: Եւ իրապէս այդպէս է: Ամեն անգամ, որ Պիքֆայայ բարձրանամ, կը զգամ, որ Աս-

տուծ կ'անհետանայ: Ամեն անգամ երբ այս պատկերը դիտեմ, արեւին մէջ կը տեսնեմ արդարութեան Արեգակը՝ Զրիստոս, որ իր աստուածային սերնէ մղուած ամեն օր երկինքէն երկիր կը խոնարհի եւ իր տէրունական բազուկներով կը գրկէ իր «սիրտին խօսող» մարդկութիւնը: Ան ցաւելով այսօրուան աշխարհի մէջ տեղի ունեցող պատերազմներէն, խռովութիւններէն, դժուարութիւններէն եւ մարդս իր մարդկութենէն դուրս բերող արարքներէն՝ երկար ժամանակ գրկած կը մնայ իր ոչխարները: Եւ ինչպէս որ երբ

տացեալ-ընթացող, գործի լծուէ՛, որպէսզի երբ Երկնապարգեւը՝ Զրիստոս երկինքէն երկիր խոնարհի քեզ գրկելու համար, քաջութիւնը ունենաս Տիրոջ ընդունելու եւ թովմաս առաքեալին հետ ըսելու. «Տէ՛րս եւ Աստուածս» (Յովհաննէս 20. 28): Աշխատե՛, որ երբ արդարութեան Արեգակին լոյսը վրադ ճառագայթէ, կարողանաս զայն լաւագոյնս ներծծել եւ զԱստուած փառաւորես Ս. Ներսէս Շնորհալիին հետ, ըսելով. «Դուն՝ ճշմարիտ լոյս, Զրիստոս, շնորհէ՛ հոգիիս՝ որ կանչուելու օրը ուրախութեամբ տեսնէ Զու փառքիդ լոյսը» (Հաւատով խոստովանիմ, թիւ 21), ինչպէս նաեւ Սաղմոսերգուին հետ բարձրադաղակէս. «Տէ՛րն է լոյսս եւ փրկութիւնս» (Սաղմոս 27. 1):

Պատրաստուէ՛, որպէսզի երբ ամեն օր արեւածագը տեսնես, կարենաս Սաղմոսասացին հետ բարձրաձայնել, ըսելով. «Ո՛վ Տէր, առտու կանուխէն լսե՛ կանչս, առտու կանուխէն Քեզի կը բարձրաձայնեմ աղօթքս» (Սաղմոս 5. 3) եւ «Երբ արթնանամ՝ տեսքովդ (լոյսովդ) պիտի կշտանամ» (Սաղմոս 17. 15): Կանխաշխատե՛, որպէսզի երբ Արեգակն արդարը իր աստուածային սիրոյ ջերմութիւնը, ճառագայթն ու լոյսը առատօրէն քեզի ընծայէ, կարենաս ամենայն վստահութեամբ եւ «համարձակածայն բարբառով» ըսել. «Լոյս հագեր ես (ո՛վ Աստուած) վերարկուի պէս, երկինքը տարածեր ես վրանի պէս» (Սաղմոս 104. 2):



տուած Պիքֆայայի մէջ է. հոն է, ներկայ է: Միայն գլուխդ բարձրացուր եւ պիտի գտնես զԻնք:

Աստուած մեզի հետ ամենօրեայ դրութեամբ կը հաղորդակցի Պիքֆայայի գարմանահրաշ բնութեան միջոցաւ: Ան մեղմ գեփիւռին ընդմէջէն իր կենդանարար շունչը կը փչէ մեր հողէն դէմքերուն վրայ: Կանաչածածկ դաշտերով ցոյց կու տայ իր կենդանի եւ գեղեցիկ դեմքը: Ծառերու բուրմունքով կը տարածէ իր անսպառ անուշահոտութիւնը. «Եւ հոտ անուշ բուրեաց աշխարհ» (Շարական): Սոխակներուն դայլայլով իր աստուածային մեղրանոյշ ձայնը լսելի կը դարձնէ: Ես ինքզինքս Աստուծոյ գոգը նստած կը զգամ Պիքֆայայի մէջ: Եւ երբ մտածեմ այս ուղղութեամբ, ականջներուս մէջ կը ինչէն Սաղմոսերգուին հետեւեալ բառերը. «Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ, երկնակամարը Անոր արարչութիւնը կը վկայէ: Իւրաքանչիւր օր լոյս վկայութիւնը կու տայ, ամէն մէկ գիշեր լոյս գիտութիւնը կը յայտնէ: Չկայ ռեւէ խօսք, չկայ ռեւէ բառ, եւ ռեւէ ձայն չի լսուիր անոնցմէ: Բայց ամբողջ աշխարհ կը սփռուի անոնց պատգամը, մինչեւ աշխարհի ծայրը կը հասնի անոնց վկայութիւնը» (Սաղմոս 19. 1-4):

Այս բոլորով հանդերձ, Պիքֆայայի արեւմուտը լաւագոյնս կը հաստատէ Տիրոջ ներկայութիւնը այդ վայրին մէջ: Բարձունքէն արեգակը հատիկ-հատիկ կ'իջնէ ծովուն վրայ եւ երկարատեւ գրկախառնում

արեւը մայր մտնէ, իր լոյսը տակաւին ծովուն վրայ կը մնայ, այնպէս ալ երբ արդարութեան Արեգակը «մայր մտնէ», իր աստուածային լոյսը կը թողու իր իսկ ձեռքով ստեղծուած մարդկութեան վրայ: Այդ պահուն ականջներուս մէջ կը զնգայ Արեւագալի ժամերգութեան ընթացքին քահանային կողմէ արտասանուող հետեւեալ մաղթանքը. «Լոյսովդ, ո՛վ Զրիստոս, ամենքս լուսաւորուեցանք» (Ժամագիրք): Անկէ ետք կը լսեմ Սաղմոսերգուին այն խօսքը, որ կ'ըսէ. «Դուն ես (Ո՛վ Աստուած) կենքի աղբիւրք. լոյսովդ է որ մենք լոյսը կը տեսնենք» (Սաղմոս 36. 9): Ինչպէս որ արեւը մայրամուտէն ետք արշալոյս կ'ունենայ, այնպէս ալ արդարութեան Արեգակը՝ Զրիստոս Յիսուս միշտ մեզի հետ է. «Չի Աստուած ընդ մեզ է»: Ան ամենեւին չի՛ լքեր մեզ (հմմտ Սաղմոս 9. 10, 37. 25 եւ 28), որովհետեւ ինք ըսաւ. «Միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհիս վախճանը» (Մատթոս 28. 20): Ինչպէս որ արեւը իր ջերմութիւնը, ճառագայթն ու լոյսը առատօրէն կը հայթայթէ ո՛րջ մարդկութեան, այնպէս ալ արդարութեան Արեգակը իր սիրոյ ջերմութիւնը, ճառագայթն ու լոյսը յորդառատօրէն կը հայթայթէ մարդկութեան, որովհետեւ «Աշխարհը Տիրոջ սիրովը լեցուն է» (Սաղմոս 33. 5), «Անսահման է Իր սէրը» (Սղ. 106. 45) եւ «Անոր սէրը յաւերժական է» (Սաղմոս 118. 1, 2, 3, 4 եւ 29):

Հետեւաբար, սիրելի հաւա-

## ԳՈՌ...

Սկիզբ՝ էջ 8

տագայում դիմակայի գալիք ազգային եւ պետական մարտահրաւերներին: «Վերելք Սիւնիք»-ի ծիրից ներս, Շուէտիայի Երիտասարդական Միութեան մեր ընկերների միջոցով իրականացրել ենք երկու ճամբարներ, Աստրալիայի Երիտասարդական Միութեան մեր ընկերների միջոցով իրականացրել ենք մէկ ճամբար: Գործիսում: Ծամբարներուն ընդհանուր թիւով մասնակցել է մօտ 500 պատանի եւ այդ 500 պատանիներին տրուել է ազգային-գաղափարական դաստիարակութիւն, Դաշնակցական դաստիարակութիւն, որպէսզի նաեւ այդ դիմադրողական ոգին մշտապէս արթուն լինի հայ պատանու մէջ: Մինչ օրս պատանիները կարօտով յիշում են

ընկերներին եւ ընկերուհիներին եւ սպասում են գալիք ճամբարներին, որ յառաջիկայում կ'իրականացնուի, ամենայն հաւանականութեամբ, մեր Ռոստոմ Երիտասարդական Միութեան՝ ՌԵՄ-ի, նաեւ Ֆրանսայի «Նոր Սերունդ» Երիտասարդական Միութեան ընկերների միջոցով:

«Դեպի Սիւնիք» ծրագրի հետ կապուած ուզում եմ ասել նաեւ, որ դաշնակցական եւ կուսակցական փորձ ունեցող այն ընկերները, որոնք ցանկութիւն կ'ունենան մասնակցելու «Դեպի Սիւնիք» ծրագրին իրենց փորձով կիսուելու կամ թէկուզ փորձ ձեռք բերելու՝ կարող են դիմել Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակ եւ գործուղուել Սիւնիք: Բազմաթիւ աշխատանքներ կան իրականացուելիք եւ Երիտասարդական դաշտում եւ պատանեկան դաշտում:

**ՊԱՇՏՈՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ**

**ՀՄԸՄ-ի ընտանեկան պարտեզը կարիքը ունի մաքրութեան պաշտօնեայի:**  
**Յաւելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել՝ 0933 213670:**

---

**Առաջնորդութիւն**  
Բերիոյ Հայոց Թեմի

**Ուսումնական**  
Խորհուրդ

**ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ**

**2023 - 2024 տարեշրջանին համար**  
 - Ազգային Մանկապարտեզը կարիքը ունի համալսարանաւարտ, մասնագետ ուսուցչուհիներու:  
 - Ազգային Միացեալ վարժարանը կարիքը ունի հետեւեալ նիւթերը դասաւանդող համալսարանաւարտ մասնագետներու.  
 - Անգլերէն,  
 - Արաբերէն,  
 - Ընկերային Գիտութիւն,  
 - Համակարգիչ:

**Մանրամասնութեան համար հեռաձայնել 0932890929-0966463195:**

## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

- 

**Խոյ**  
Անիմաստ նիւթերու մասին մի՛ գրուցէք: Չայրացկոտ ու բիրտ մի՛ ըլլաք: Բամբասանքէ գոռուացէ՛ք:
- 

**Ցուլ**  
Շաքաթը լի է սիրային արկածախնդրութիւններով: Հաճելի մարդոց հետ գրուցելով հոգեկան խաղաղութիւն պիտի վայելէք:
- 

**Երկուորեակ**  
Ձեր ամբողջ հմայքն ու գրաւչութիւնը ի գործ դրէ՛ք հաստատելու համար նոր ծանօթութիւններ, որոնք լուրջ յարաբերութիւններու հիմքը պիտի ըլլան:
- 

**Խեցգետին**  
Ձեր ուժը մի՛ վատնէք անօգուտ աշխատանքներու համար: Ընտանիքի անդամներով հաճելի պտոյտ մը պիտի ունենաք:
- 

**Առիւծ**  
Չափազանց զգացական վերաբերմունք ունիք ձեր շուրջիներուն նկատմամբ: Բախտաւոր էք եւ նախանձելի:
- 

**Կոյս**  
Անհրաժեշտ է, որ հոգ տանիք ձեր սիրելիներուն եւ երեքէք չանտեսէք զանոնք: Անոնք ձեր օգնութեան կարիքը ունին:
- 

**Կշիռք**  
Սիրային լուրջ յարաբերութիւն մը պիտի ունենաք, որ ձեր ամբողջ կեանքը պիտի փոխէ: Նիւթական գետնի վրայ յաջողութիւն մըն ալ պիտի արձանագրէք:
- 

**Կարիճ**  
Դուք կրնաք զարգացնել ձեր ներկայ վիճակը եւ յաղթահարել խոչընդոտները: Չօրաւոր անհատականութեան տեր էք:
- 

**Աղեղնաւոր**  
Ի վերջոյ պիտի հասկնաք, թէ որքա՛ն սխալած էք: Պաշտպանեցէ՛ք ձեր իրաւունքները եւ արդարութիւնը երեւան պիտի ելլէ:
- 

**Այծեղջիւր**  
Մօտ ատենէն ձեր անձնական կեանքը հիմնովին պիտի բարեփոխուի: Ձեր զգացումները խոստովանեցէ՛ք ձեր սիրելիին:
- 

**Ջրհոս**  
Ազատասեր եւ յամառ էք: Երկար ճամբորդութեան մը ընթացքին կարելոր անձի մը պիտի ծանօթանաք եւ հաճելի ժամեր անցընէք:
- 

**Ձուկ**  
Բարի ու աշխատասեր էք: Մի՛ վարանիք օգնութեան փութալու ձեր շուրջիներուն: Ձեր առողջութեան ալ հոգ տարէ՛ք:

# ԽՆԾԱՆԿԱՐ



Սեւան Տէրմանյան

## ՎԱՐՂԱՎԱՌ՝ ՁՈՒՐԻ ՓԱՌԱՏՕՆ, ԹԷ ԲՐԻՍՏՈՍԻ ՊԱՅՏԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆ

Վարդավառի կամ Վարդեվառի տօնին արմատները կ'երկարին մինչեւ նախաքրիստոնէական շրջան: Նախաքրիստոնէական շրջանին, Վարդավառի տօնը կապուած էր հայկական դիցարանի ջուրի, սիրոյ, պտղաբերութեան ու գեղեցկութեան աստուծոյ՝ Աստղիկին, որուն խորհրդանիշն էր վարդը: Արդարեւ, հայերու սիրոյ եւ գեղեցկութեան աստուածուհին Աստղիկը, Վահագն աստուծոյ սիրուհին էր:




րուհին էր: Անոր գլխաւոր մեհեանը կը գտնուէր Տարօն գաւառի Աշտիշատ ավանը եւ կը կոչուէր Աստղական տաճար: Աւանդութեան մը համաձայն, երբ Աստղիկը Արածանիի ջուրերուն մէջ կը լողնար, հայ կտորիճները անոր գեղեցկութեամբ հիանալու համար բլուրներուն վրայ կրակ կը վառէին լողանքի վայրը լուսաւորելու համար: Բայց աստուածուհին իր շրջապատը մշուշ կը գոյացնէր քողարկելու համար իր մերկութիւնը: Այդ օրէն, գաւառը կը կոչուի Մշուշ, իսկ հետագային՝ Մուշ: Աստղիկ աստուածուհիի անունը կը կրէ հայկական տոմարի իւրաքանչիւր ամսուան եօթերորդ օրը:



Առասպելի մը համաձայն, անգամ մը Աստղիկ աստուածուհին կը լսէ, որ իր սիրեցեալ Վահագնը ծանրօրէն վիրաւորուած է, բուսիկ կը վազէ անոր մօտ: Ծանապարհին, վազելով վարդենիներու մէջէն, կը վիրաւորէ ոտքերը, եւ անոր արիւնով կը ներկուին վարդերը: Այդ օրէն կարմիր վարդը սիրոյ խորհրդանիշ համարուած է Հայաստանի մէջ: Աստղիկը կը համապատասխանէ յունական Աֆրոտիթէ եւ Հռոմէական Վեներա աստուածուհիներուն: Բանաստեղծ Յ. Թումանեան բանաստեղծութիւն մը ունի «Հիմն Աստղիկին» խորագրով. «հա այդ հիմնէն քառեակ մը. «Ելևում է հա՛հա նազելի փառքով երկնի խորքերից սիրոյ դիցունհին,

Պճնուած կոյսի ճերմակ շղարշով, Վառուելով իր սուրբ շողերի միջին»:  
Այդ օրերէն իսկ Վարդավառը կը տօնահամբուեր մեծ հանդէսներով. մարդիկ Աստղիկ աստուածուհիին կը նուիրէին վարդեր ու իրարու վրայ ջուր կը թափէին: Վարդավառը միաժամանակ եղած է ջուրի պաշտամունքի, պտղաբերութեան ու արգասաւորութեան ուժերուն նուիրուած տօն: Տօնը նաեւ առիթ եղած է անցեալին, որ մեր նախահայրերը անձրեւ խնդրելու համար աղօթք եւ ծես կատարէին: Հեթանոսական օրերէն, մեր ժողովուրդին կապը մեծ եղած է այս տօնակատարութեան հետ: Գրիգոր Լուսաւորիչ տեսնելով, որ կարելի չէ այս տօնը զանց առնել հայկական ավանդութիւններէն, զայն փոխարինած է այլ տօնով՝ Յիսուս Զրիստոսի այլակերպութեան յիշատակին նուիրուած, որ, ըստ ավանդութեան, տեղի ունեցած է Թափօր լեռան վրայ: Զրիստոսի Պայծառակերպութեան մասին կը վկայեն Մատթէոս (17. 1-13), Մարկոս (9. 1-12) եւ Ղուկաս (9. 28-36) ւաւետարանիչները:



Հայ ժողովուրդը Զրիստոնէական շրջանին ալ սիրելով այս տօնը, զայն դարձուցած է Հայ Առաքելական եկեղեցւոյ հինգ տաղաւար տօներէն մին, անգամ մը եւս շեշտելու համար անոր կարեւորութիւնն ու ժողովուրդին անխախտելի կապուածութիւնը: Վարդավառի տօնակատարութիւնը միշտ ալ Չատկուան տօնէն 98 օր ետք կը յիշատակուի: Զրիստոնէական գետնի վրայ եւս, անցեալին Վարդավառը կը տօնուէր ավելի մեծ տարողութեամբ: Մարդիկ Վարդավառի տօնին իրենց տունները կը զարդարէին կանաչ ոստերով, ծաղկեփունջեր կը նուիրէին իրարու, եկեղեցւոյ հասկեր կը նուիրէին, որպէս արտերու եւ այգիներու օրհնութիւն: Անասնապահներ իրենց կենդանիները ծաղիկներով կը զարդարէին ու ժողովուրդը խնձոյքներ եւ ջրախաղեր կը կազմակերպէր: Իսկ Զրիստոսի պայծառակերպութեան տօնին իրար վրայ ջուր թափելը կը խորհրդանշէր մեղքերէ մաքրուիլը: Վարդավառը Հայաստանի տարբեր մարզերու եւ Սփիւռքի մէջ նոյն կերպով կը յիշատակուի: Առաւօտեան բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի կ'ունենան Զրիստոսի պայծառակերպութեան նուիրուած Ս. Պատարագ, ջուրի եւ պտուղներու օրհնութիւն (խնձորը տօնի խորհրդանիշներէն է): Հայաստանի որոշ մարզերու մէջ ընկալուած սովորութիւն է աղաւնիներ ազատ արձակելը, որ կը խորհրդանշէ ջուրի տօնին մէկ այլ կողմը՝ համաշխարհային ջրհեղեղին վերջը:



Ռաֆֆի Սիկանյան

### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՍԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

- Սուրիոյ ֆուտբոլի հանրապետական բաժակի աւարտական մրցումին, Լաթաքիոյ թըշրինը 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց Դամասկոսի Ռահտեն եւ կրցաւ իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով տիրանալ բաժակին: Հանդիպումի միակ կողմը նշանակեց հալետ Մըլայետը:

- Ասիոյ աղջկանց 16 տարեկանէ վար տարիքի ասիոյ տանութեան առաջին հանդիպումին, Սուրիոյ կազմը, որուն մաս կը կազմէին նաեւ ՀՄԸՄ-ի աղջկանց խումբի խաղացողներ Լիլիթ Սարգիսեանն ու Միրելա Չափարեանը, խաղցաւ Զորեայի հաւաքականին դէմ: Խաղը աւարտեցաւ 58 - 91 արդիւնքով, ի նպաստ Զորեայի հաւաքականին:

- Ալճերիոյ մէջ տեղի ունեցած արաբ երկիրներու մրցաշարքին, Սուրիոյ ֆուտբոլի ողորմական հաւաքականը յաջողեցաւ փոխանցուիլ կիսաւարտական փուլ՝ 4 - 2 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Մորիթանիան: Սուրիոյ կողմը նշանակեցին Հաւաքականի խմբապետ Մարտիկ Մարտիկեանը, Հագուան Օսմանը եւ Մուհամետ Ռիհանիյէն:



## ՀԱՅԿԱԿԱՆ

### ԺՈՐԱ ԳՐԻԳՈՐԵԱՆ՝ ԾԱՆՐԱՍԱՐՏԻ ԵՐՈՂՊԱՅԻ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ ԱՆՈՅԵԱՆ

Հայաստանի ծանրորդ ժորա Գրիգորեան առաջին ոսկի մետալը նուաճեց Սոլտովայի մայրաքաղաք Քիշնեւի մէջ ընթացող ծանրամարտի եւրոպայի պատանեկան առաջնութեան: 61



ըկ. ծանրութիւն ունեցող մարզիկը 17 տարեկաններու մրցաշարքի երկամարտին բարձրացուց 244 ըկ. եւ գրաւեց առաջին տեղը: Ան ոսկի մետալ նուաճեց նաեւ իրումի վարժութեան (135 ըկ.), իսկ պոկումի վարժութեան (109 ըկ.) գրաւեց 3-րդ դիրքը՝ արժանանալով պրոնզէ մետալի: Նոյն ծանրութեան կարգին հանդէս եկած հայ երկրորդ ծանրորդը՝ Սամուել Մարտիրոսեանը, երկամարտի 234 ըկ. արդիւնքով գրաւեց 4-րդ հորիզոնականը: Նշենք, որ Հայաստանի ծանրորդ Կառլէն Դաւիթեան (49 ըկ.) իր ծանրութեան կարգին գրաւեց 3-րդ տեղը:

### ՆԱՅԱՍԱՆԻ...

#### Սկիզբ՝ Էջ 6

հուրեմբ բարձր թեւածելու տրամադրութիւնն ու մարմաջը:

Եռագոյն դրօշը կը խորհրդանշէ՝ ա. - հայրենիքի ազատ եւ ինքնիշխան դառնալու ճամբուն թափուած արիւնը, բ. - հայ երկնակամարին վրայ խաղաղ եւ բարգաւաճ երկինք ունենալու ցանկութիւնը, գ. - հայ ազգի արդար աշխատանքի արդիւնքին փայլքը:

- Հայաստանի քայլերգի ոգին՝ զարթոնքէն անկախացում ընկերակցած է հայ ազգի ազատագրական պայքարին: Հայը երկար տարիներ երգելով «Մեր Հայրենիք»-ը, պայքարած է բռնակալներու դէմ՝ պաշտպանելով ազգային իրաւունքներ:

Հայկական բանակը խորքին մէջ

կը պատկանի ողջ հայութեան, որուն նախնական զարգացումն էր ֆիտայական շարժումը, որուն հիմնական նպատակն էր սեփական գէնքի ուժով վերացնելը ամեն տեսակի փորձանք թէ անարդարութիւն: Այսօր նոյնն է մարտահրաւերը՝ հայուն սեփական զինեալ ուժերով պաշտպանել հայ ազգին իրաւունքները՝ պետական թէ դիւանագիտական տուեալներով:

ՀՀ անկախութեան հռչակագիրին եւ սահմանադրութեան պետական թելադրանքները իրենց ծալքերուն մէջ կը պարփակեն՝ ա. - ընկերային ծառայութիւն, բ. - ազգային անվտանգութիւն, գ. - անկախ պետականութեան յարատեւութիւն եւ անվտանգ խորհրդարանի երաշխաւորութեամբ մատուցուած պետական ծառայութիւն:

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 446)

Պատրաստեց՝ Մարինա Զիւլբարջեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2		■				■		■				
3			■				■		■			
4				■						■		
5					■						■	
6		■										
7				■								
8						■		■			■	
9		■					■					
10	■								■			
11								■				■
12			■		■							

### Հորիզոնական

- 1- Կոմիտասի երգերէն (երկու բառ):
- 2- Եական բայ: Հակառակ՝ գիւղաքաղաք:
- 3- Տառի մը անունը: Աշակերտ: Յոգնակերտ մասնիկ:
- 4- Լեզուով մը՝ այո: Կրկնուած ձայնաւորներ:
- 5- Աստուածաշունչը կ'ըսէ. «Ձեր ..... Այո թող ըլլայ եւ Ոչը՝ Ոչ»:

Հակառակ՝ թիկունք:

- 6- «Սեւ աչքերէն շա՛տ վախեցիր» երգի հեղինակին մականունը:
- 7- Իգական անուն: Ժայռ:
- 8- Մանիշակագոյն ծաղիկով բոյս: Զրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պետական կրօնք հռչակուելու թուականը:
- 9- Հակառակ՝ ցուցական դերանուն: Խառնատառ՝ կրօնական արարողութիւն:
- 10- Ծիր, շրջանակ: Իրերայաջորդ տառեր:
- 11- Մշուշ: Երկբարբառ:
- 12- Աղբիւր: Խոր:

### Ուղղահայեաց

- 1- Մեղադրանք: Հակառակ՝ տարի:
- 2- Հակառակ՝ անձնական դերանուն: Հակառակ՝ զօր:
- 3- Տառի մը անունը: Հակառակ՝ 660: Առարկայ: Հակառակ՝ տառի մը անունը:
- 4- Ֆրանսական քաղաք: 420: Պահելու տեղ:
- 5- Բիծ: Թշնամի:
- 6- Հակառակ՝ թաքուն պայթուցիկ: Հակառակ՝ արու ոչխար:
- 7- Եւս: Ահաւասիկ: Հակառակ՝ հարցական դերանուն:
- 8- Հակառակ՝ հանքային նիւթերով հարուստ դեղին պտուղ: Հակառակ՝ 5090:
- 9- 4400: Մարելու մօտ (կրակ, լոյս):
- 10- Հայկական մականուններու վերջավանքը: Կարմիր պտուղ մը: Երկբարբառ:
- 11- Քանդում: Կրկնուած ձայնաւորներ: Խօսք:
- 12- Ռուսիոյ կայսր: Ընտիր ծի:

### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 445)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	u	h	a	l	w	u		g	a	h		
2	p	t		h	p		u	l	w	p		
3	w	p	a		h		w			h		n
4	u			t				l	u			u
5	h	u	l	n	j	u		w			l	h
6	u	n	w	l		h	u	l	n	p		h
7			h								u	n
8	u		h		h	n	u	h	l	n		u
9	j	w	p	a	d	n	u		n	u		n
10	w	u	l	q	p		p		w	p		u
11	u	h			l	w	u			l		u
12	q	w	u	w	h	w	p	u		l		w

ԼՈՒՐԵՐ

### ԵՐԿՐԵՐԵՐԹ

17/7



23° 39°

### ԵՐԵՐԵՐԵՐԹ

18/7



23° 39°

### ՉՈՐԵՐԵՐԵՐԹ

19/7



24° 39°

### ՀԻՆՑԵՐԵՐԹ

20/7



23° 38°

### ՈՐԲԱՐԹ

21/7



25° 37°

### ՇԱՐԱՐԹ

22/7



26° 42°

### ԿԻՐԱԿԻ

23/7



26° 42°



## ԱՉԳ. ՔԱՐԵՆ ԵՓՓԷ ՃԵՄԱՐԱՆԻ...

Սկիզբ՝ էջ 1

Երգչախումբին յաջորդեց Արցախի պատմամշակութային կոթողներու ներկայացումը, ապա շրջանաւարտները հանդես եկան խմբային հայերէն եւ արաբերէն ասմունքներով:

Տաղանդաշատ խումբ մը շրջանաւարտներ ջութակով ու դաշնամուրով ներկայացուցին հայրենասիրական երգեր:

Արաբերէն ուղերձը ընթերցեց Սելինա Երեցեան: Ան 9-րդ կարգի աշակերտութեան անունով շնորհակալութիւն յայտնեց Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի տնօրէնութեան, ուսուցչական կազմին եւ ծնողներուն՝ ողջ տարուան ընթացքին իրենց ցուցաբերած հոգատարութեան ու խնամքին համար: Ապա շնորհաւորեց իր դասընկեր, դասընկերուհիները եւ անոնց մաղթեց նորանոր յաջողութիւններ:

Հայերէն ուղերձը ընթերցեց Արշալոյս (Արշի) Տիւլպերեան, որ ըսաւ. «Ամբողջացուցինք եւս փուլ մը, որ իւրայատուկ էր իր երանգով ու եռանդով, խիստով ու խանդով, զգացական բազմաբնոյթ պահերով: Անիկա կը տարբերէր մեր անցած մանկական փուլերէն եւ պիտի տարբերի երիտասարդութեան ու անոր յաջորդող կայարաններէն:

Մեր այս տարիքի զգացական դիւրաթեք աշխարհը յենարան գտաւ Ազգային Քարէն Եփփէ Ճեմարանի տաքուկ օջախին մէջ, անոր անդամներուն ջերմիկ հոգատարութեան ներքեւ:

Ի գուրչէ, որ հայկական վարժարանները սրբավայրեր կը համարենք, որովհետեւ հոս, հայկականութիւն բուրոյղ այս յարկին տակ, մենք կը սորվինք մեր սրբազան տառերը, կը մշակենք մեր լեզուի մրգ աստանը ու կը հարստացնենք զայն ոսկեղնիկի ախորժելի հատապտուղներով, կը մաքրենք մեր միտքերու մարգագետինը օտարամուտ սեգերէն եւ կ'ոռոգենք մեր մատղաշ կեանքի անդաստանները հայկական բարձրով ու անախորհիւններով»:

Ազգ. Քարէն Եփփէ Ճեմարանի տնօրէնուհի Չեփիւռ Բէիսեան նախ վերջիցէ իր ուսումնական տարին Ճեմարանի յարկին տակ, ապա որպէս տնօրէն իր աշխատանքի տարիները մանկապարտէզէն նախակրթարան, ապա Ճեմարան ու յուզումնախառն ապրումներով գնահատեց հայ դպրոցին դերը հայ անհատի կերտումին եւ անոր հոգեմտաւոր աշխարհի գարգացումին մէջ: Տնօրէնուհին ըսաւ, որ այս տարին անցուցինք բաւական դժուար պայմաններու մէջ, հազիւ թօթափած պսակածէն ժահրի համաճարակին հետեւանքով, բոլորս ցնցուցեցանք Սուրիան հարուածած երկրաշարժին հետեւանքով ու Ճեմարանը դարձաւ անապահով մնացողներու օթեան: Ապա յիշեց երկրի տնտեսական ծանր վիճակը եւ դպրոցին դիմագրաւած տնտեսական դժուարութիւնները ու անոնց յաղթահարման նպաստող բոլոր բարերարներուն ու Ճեմարանի Շրջ. Միութեան եւ Քալիֆորնիոյ Ընկերակցութեան ճիգերն ու նուիրական աշխատանքը: Տնօրէնուհին դիտել տուաւ, որ հակառակ բոլոր դժուարութիւններուն կրթական նուիրեալ մշակ-

ներուն շնորհիւ ուսումնակրթական կեանքը շարունակուեցաւ: Ապա Բէիսեան ընթերցեց Ճեմարանի 2022-2023 ուսումնական տարուան տեղեկագիրն ու աշակերտներուն ձեռքբերումները ներկայացուց:

Ճեմարանի պետական տնօրէն Ապտուլ Համիտ ալ-Մասրի վեր առաւ երկրի դժուար պայմաններուն մէջ կրթական կեանքին անխափան ընթացքը եւ մաղթեց որ նորահաս սերունդները մասնակցին Սուրիոյ վերածաղկումին: Ան երախտագիտութիւն յայտնեց սուրիական բանակին եւ Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատին, որոնց միասնական ջանքերով երկիրը թօթափեց պատերազմի հետքերը ու պիտի յաջողի դուրս գալ տնտեսական եւ այլ դժուարութիւններէ՝ շնորհիւ ուսեալ տարին ստեղծագործ մտքին ու յառաջդիմութեան:

Ամեն տարի Ճեմարանի Շրջ. Միութիւնը կը պարգեւատրէ միջնակարգի երեք կարգերու առաջնակարգ աշակերտները: Արդարեւ տնօրէնուհիին եւ Շրջ. Միութեան վարչութեան ատենադպրուհի Յուրի Տիւլպերեանի ձեռամբ նախ պարգեւատրուեցան 2021-2022 ուսումնական տարեշրջանի 9-րդ կարգի պետական քննութեան առաջնակարգ երեք հետեւեալ աշակերտները՝ Շողակ Խրոյեան (առաջին), Արփի Արապանեան (երկրորդ) եւ Նանոր Լախոյեան (երրորդ): Այս երեքը պարգեւներ ստացան նաեւ ՍՕ Խաչի Շրջ. Վարչութեան կողմէ:

7-րդ կարգէն պարգեւատրուեցան Ալինա Գրիգորեան (առաջին), Բալիկ Մարգեան (երկրորդ) եւ Նարոտ Սաղպագարեան (երրորդ):

8-րդ կարգէն պարգեւատրուեցան Սանտրա Պապիկ (առաջին), Միւսա Գալայճեան (երկրորդ) եւ Փաթիլ Շաթոյեան (երրորդ):

Ճեմարանի 1977-ի շրջանաւարտներուն կողմէ պարգեւատրուեցան նաեւ 7-րդ, 8-րդ եւ 9-րդ կարգերու հայերէնագիտութեան գերազանց հետեւեալ աշակերտները:

7-րդ կարգէն Ալինա Գրիգորեան, Բալիկ Մարգեան եւ Նարոտ Սաղպագարեան: 8-րդ կարգէն Մարիա Բրոյեան, Փաթիլ Շաթոյեան եւ Ալիսիա Գասապեան: 9-րդ կարգէն Սերիկ Մկրտիչեան, Արշալոյս (Արշի) Տիւլպերեան եւ Սելինա Երեցեան:

Հասաւ ամենէն ուրախալի պահը, երբ բեմ բարձրացան 2022-2023 տարեշրջանի 53 շրջանաւարտներ՝ Առաջնորդ Սրբազան Հօր ձեռամբ միջնակարգի իրենց վկայականը ստանալու համար: Միեւնոյն ատեն հայերէնագիտութեան առաջնակարգ ուսանողները տնօրէնութեան կողմէ գովասանագրերու արժանացան:

Օրուան եզրափակիչ պատգամը տուաւ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանը, որ իր խօսքը ուղղելով շրջանաւարտներուն՝ յորդորեց օգտագործել Ճեմարանէն ներս ուսումնական իւրաքանչիւր տարի՝ առաւելագոյն գիտելիքներով գինուելու, սրընթաց գարգացող այս դարուն հետ քայլ պահելու եւ յառաջադէմ երիտասարդներ դառնալու, որպէսզի ե՛ւ անձնական, ե՛ւ ազգային իրենց կեանքին մէջ ստեղծագործ ներկայութիւն դառնան:

Հանդէսը փակուեցաւ Ճեմարանի քայլերգով, կատարողութեամբ երգչախումբին, ապա սրբազան հօր «Պահպանիչ» աղօթքով: